

### ԳՈՒՐԳԵՆ ՄԱԴՈՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի  
գրասենյակի փաստաբան  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի  
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

## ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պետության կողմից ոստիկանության առջև դրված խնդիրների լուծումը, պայմանավորված այդ խնդիրների բնույթով, դրանց լուծման ընթացքում անձանց իրավունքների և ազատությունների ոտնահարման ռիսկայնության բարձր աստիճանով, ոստիկանության ծառայողներից ծառայողական գործունեության ընթացքում պահանջում է բարեխղճություն, եռանդ, ազնվություն և իրավական ակտերով սահմանված պահանջների հստակ պահպանում:

Ոստիկանության գործունեության ընթացքում օրինականության և քաղաքացիների իրավունքների ապահովման երաշխիքների կատարելագործումը ՀՀ պետաիրավական զարգացման հիմնական խնդիրներից է: Այս խնդրի արդիականության և ծավալների մասին են վկայում ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտումների, դաժան վերաբերմունքի և այլ հակաօրինական գործողությունների մասին իրավասու մարմիններին ներկայացվող քաղաքացիների բողոքների մեծ մասը: 2011թ-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցում ՀՀ ոստիկանության համակարգում հայտնաբերված խնդիրների հանգամանալից ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ ոստիկանության ծառայողների կողմից օրենքի պահանջների խախտումները և քաղաքացիների իրավունքների ոտնահարումը որպես կանոն կատարվում է հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման, այդ առթիվ նյութերի նախապատրաստման և քրեական գործերով նախնական քննության ընթացքում<sup>1</sup>:

Ոստիկանության ծառայողների կողմից իրենց ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարման ապահովմանը, դրանով իսկ ծառայության համապատասխան տեսակի կողմից իր առջև դրված խնդիրների արդյունավետ լուծման բարձրացմանն է ուղղված ոստիկանության ծառայողների պատասխանատվության իրավական ինստիտուտը:

Պետական, այդ թվում ոստիկանության ծառայողների իրավական պատասխանատվությունը իրենից ներկայացնում է իրավասու սուբյեկտների (պաշտոնատար անձի, մարմնի) ներգործությունը պետական ծառայողների հետաքրքրությունների, ձգտումների, գիտակցության, կամքի և այդ կերպ նաև նրանց կողմից իրականացվող մասնագիտական գործունեության վրա: Այն պետք է իրականացվի այնպես, որ նպաստի ծառայության խնդիրների արդյունավետ իրականացմանը: Այդ նպատակով ծառայողներին պատասխանատվության ենթարկելը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, լինի ժամանակին և նպատակաուղղված:

Պետական ծառայողների պատասխանատվության իրավական ինստիտուտը հանդիսանում է պետական ծառայության իրավական ինստիտուտի բաղկացուցիչ մասը և իրենից ներկայացնում է իրավական նորմերի ամբողջություն, որոնք սահմանում են պետական ծառայողների պատասխանատվության հիմքերը, տեսակները և դրանց կիրառման կարգը:

Ոստիկանության ծառայողի իրավական պատասխանատվությունն արտահայտվում է իրավախախտում կատարելու համար օրենքով նախատեսված կարգով պատասխանատվության միջոցի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կիրառմամբ:

Ոստիկանության ծառայողի իրավախախտումը վերջինիս մեղավոր գործողությունը կամ անգործությունն է, որը չի համապատասխանում և հակասում է նորմատիվ ակտերի պահանջներին: Դրան հակառակ՝ ծառայողի բոլոր արարքները, որոնք համապատասխանում են իրավական ակտերի պահանջներին, իրավաչափ են և չեն կարող առաջացնել պատասխանատվություն:

Կախված իրավախախտման բնույթից և վտանգավորությունից, մեղքի աստիճանից, իրավախախտումը կատարելու պայմաններից, դրա առաջացրած հետևանքների բնույթից և այլ հանգամանքներից՝ ծառայողները կարող են ենթարկվել կարգապահական, նյութական, վարչական կամ քրեական պատասխանատվության:

Ոստիկանության ծառայողների կատարած բոլոր իրավախախտումները, կապված այն հանգամանքի հետ, թե դրանք կատարվել են կապված ծառայողական գործունեության հետ, թե ոչ, կարելի է բաժանել երկու խմբի:

Ծառայությունից դուրս կատարված իրավախախտումների համար ոստիկանության ծառայողները պատասխանատվություն են կրում այլ քաղաքացիների հետ ընդհանուր հիմքով և կարգով: Այս դեպքում վերջիններիս վրա ամբողջ ծավալով տարածվում են իրավական պատասխանատվության բոլոր տեսակները՝ բացառությամբ վարչական պատասխանատվության:

Ոստիկանության ծառայողների վարչական պատասխանատվությունը նրանց նկատմամբ վարչական տույժերի կիրառումն է՝ իրավական ակտերով նախատեսված իրենց ծառայողական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնական պարտականությունների մեջ<sup>2</sup>:

Ձինծառայողները և վարժական հավաքներին կանչված զինապարտները, ինչպես նաև ոստիկանության մարմինների շարքային կազմը և ղեկա-

վար կազմերի մեջ մտնող անձինք վարչական պատասխանատվության են ենթարկվում ըստ համապատասխան կարգապահական կանոնների: Դանապարհային երթևեկության կանոնների, որսի, ձկնորսության և ձկան պաշարների պահպանության կանոնների, մաքսային կանոնների խախտման և մաքսանենգության համար այդ անձինք վարչական պատասխանատվություն են կրում ընդհանուր հիմունքներով: Նշված անձանց նկատմամբ չի կարող կիրառվել տուգանք: Մյուս անձինք, որոնց վրա տարածվում է կանոնագրքերի կամ կարգապահության վերաբերյալ հատուկ կանոնադրությունների գործողությունը, դրանցով ուղղակիորեն նախատեսված դեպքերում վարչական իրավախախտումների համար կրում են կարգապահական, իսկ մնացած դեպքերում ընդհանուր վարչական պատասխանատվություն: Նշված դեպքերում այն մարմինները (պաշտոնատար անձինք), որոնց վերապահված է վարչական տույժեր նշանակելու իրավունք, կարող են տույժեր կիրառելու փոխարեն իրավախախտումների վերաբերյալ նյութերը հանձնել համապատասխան մարմիններին՝ մեղավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծման համար:

Ինչ վերաբերում է ոստիկանության ծառայողներին նյութական պատասխանատվության ենթարկելուն, ապա ՀՀ օրենսդրությունը դրա համար առանձնահատկություններ չի նախատեսում, և պետական բոլոր ծառայողները նյութական պատասխանատվության են ենթարկվում մեկ միասնական կարգով: Ոստիկանության ծառայողները նյութական պատասխանատվություն են կրում ինչպես իրենց պատճառած գույքային, այդպես էլ ոչ գույքային վնասի համար: Ոստիկանության (պետական) ծառայողների կողմից պատճառած գույքային վնասի համար նյութական պատասխանատվությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1058-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից, ըստ որի՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունը օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա: Վնասի տակ այս դեպքում հասկացվում է նյութական վնասը, որը արտահայտվում է տուժող սուբյեկտի կրած գույքային կամ ֆինանսական կորուստներով: Ոստի-

www.lawinstitute.am

կանությունում (պետական) ծառայողի քաղաքացիաիրավական պատասխանատվությունը վրա է հասնում պետական մարմնին կամ երրորդ անձին ոստիկանության (պետական) ծառայողի կողմից ծառայողական պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, ներառյալ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով նյութական վնաս հասցնելու դեպքում: Ֆիզիկական և իրավաբանական անձանց նյութական պատասխանատվությունից պետական ծառայողների (պաշտոնատար անձանց) նյութական պատասխանատվության առանձնահատկությունները սահմանված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածով: Համաձայն այդ հոդվածի՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ), ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքի կամ այլ իրավական ակտի չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով պատճառված վնասը հատուցում է ՀՀ-ն կամ համապատասխան համայնքը:

Ոստիկանության ծառայողների կողմից պատճառված ոչ գույքային վնասի համար նյութական պատասխանատվության հիմքերը և կարգը բխում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի բովանդակությունից, որի 1-ին մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:

Արդարադատություն իրականացնելիս պատճառված վնասը հատուցվում է միայն այն դեպքում, երբ դատավորի մեղքը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով: (ՀՀ Քաղաքացիական օրենսգրք, հոդված 1064-րդ, մաս 3):

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների փոխարեն վնասի փոխհատուցումը ՀՀ-ի կամ համայնքի կողմից բնավ էլ չի ազատում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին նյութական պատասխանատվությունից հետագարձ (ռեգրեսիվ) կարգով, այսինքն՝ նրանք ՀՀ-ի, համայնքի կամ համապատասխան մարմնի պահանջով պարտավոր են հատուցել իրենց կողմից հասցված վնասի հատուցման համար կատարված ծախսը:

Կարծում ենք, որ պետական ծառայողներին նյութական պատասխանատվության ենթարկելու վերը նշված կարգավորումն ունի գործնականում խնդիրներ առաջացնելու ունակ թերություն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ իրավական կարգավորման նման պայմաններում օրենսդիրը սահմանել է, որ ՀՀ-ն փոխհատուցում է քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց *ապօրինի* գործողություններով պատճառված վնասը: Կարծում ենք, որ օրենսդրորեն պետք է կարգավորվեն այն հարաբերությունները, երբ քաղաքացուն կամ իրավաբանական անձին վնաս է պատճառվում ոչ միայն պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց *ապօրինի*, այլև իրավաչափ գործողություններով: Այդպիսի իրավիճակների առաջացումը բավականին հավանական է հատկապես ոստիկանությունում ծառայողների ծառայողական գործունեության ընթացքում հանցագործությունների հայտնաբերման, բացահայտման, հանցանք կատարած անձանց ձերբակալման, նրանց գործողությունների նախականիսման և կանխման ընթացքում: Այս առթիվ գտնում ենք, որ անհրաժեշտ է համաձայնել Ս.Վ.Սուպրունայի կարծիքին, որ պետությունը պարտավոր է պատճառված նյութական վնասի համար նյութական պատասխանատվություն կրել հանցագործությունների բացահայտման և քննության «զոն» դարձած քաղաքացիների առաջ<sup>3</sup>:

Որպես կանոն պետական ծառայողների կարգապահական պատասխանատվության տակ նկատի է առնվում համապատասխան հիմքերի առկայության դեպքում պետական ծառայողների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառու-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

նր<sup>4</sup>: ՀՀ օրենսդրությունը պետական ծառայողների յուրաքանչյուր տեսակի համար նախատեսում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու հատուկ հիմքեր, տույժեր և կարգ:

Կարգապահական պատասխանատվության հիմքը կարգապահական խախտումն է:

Այն հանգամանքը, որ պատասխանատվության այս ձևը գործնականում պետական ծառայողների նկատմամբ առավել հաճախ կիրառվող պատասխանատվության ձևն է, իրավաբան գիտնականներին դեռևս 20-րդ դարի 60-ական թվականներին հիմք է տվել եզրահանգելու, որ կարգապահական պատասխանատվությունը պետական ծառայողների պատասխանատվության հիմնական ձևն է<sup>5</sup>: Այս մոտեցմանը դժվար է չհամաձայնել: Իրականում պետական ծառայողների նկատմամբ պատասխանատվության այս տեսակի կիրառման հավանականությունը առավել մեծ է, քան վարչական, առավել ևս քրեական պատասխանատվության: Պետական ծառայողների գերակշիռ մասը ծառայողական գործունեության ընթացքում ձգտում է թույլ չտալ լուրջ իրավախախտումներ, որոնք կպարունակեն հանցագործության հատկանիշներ՝ այդ ընթացքում տարբեր պատճառներով թույլ տալով արարքներ, որոնք կարող են որակվել որպես կարգապահական խախտումներ: Այս իրավիճակը թելադրվում է պետական կառավարչական գործունեության բնույթից, որով զբաղված են պետական ծառայողները:

Այս ամենի թվում, ցավոք սրտի, պետք է համաձայնել Ա.Ա.Գրիշկովցի հետ նրանում, որ հետխորհրդային ժամանակաշրջանում դեռևս ակնհայտորեն ամբողջությամբ չի ընկալվում կարգապահական պատասխանատվության խթանիչներուժը և հետևաբար այն ողջ ծավալով չի օգտագործվում<sup>6</sup>:

Կարգապահական պատասխանատվության բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա միջոցները՝ կարգապահական տույժերը, կարգապահական զանցանք կատարած պետական ծառայողների նկատմամբ կիրառվում են անձին պաշտոնի նշանակելու իրավասությամբ օժտված վերադաս մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից ենթակայության կարգով:

Հանրային ծառայողների կարգապահական պատասխանատվության ընդհանուր հիմքերը սահմանված են «Հանրային ծառայության մասին»

ՀՀ օրենքով: Մասնավորապես այդպիսիք են ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ծառայողական լիազորությունները վերազանցելը, աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելը:

Հանրային ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի տեսակները, դրանք կիրառելու կարգը և դրա հետ կապված այլ հարաբերությունները կարգավորվում են պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Ոստիկանությունում ծառայողների նկատմամբ կիրառվող պատասխանատվության տեսակների համակարգում մյուսների հետ համեմատած կարգապահական պատասխանատվությունը կիրառվում է առավել հաճախ, և այն ունի բավական մեծ կիրառական նշանակություն:

Կարգապահական խախտման՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ծառայողական դիրքն ի չարը գործադրելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու դեպքերում, եթե դրանք չեն պարունակում քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ, օրենքով սահմանված կարգով ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվում են հետևյալ կարգապահական տույժերը՝

- 1) նկատողություն,
- 2) խիստ նկատողություն,
- 3) 10-50 տոկոսով պաշտոնային դրույքաչափի իջեցում մինչև 3 ամիս ժամանակով,
- 4) զգուշացում պաշտոնին ոչ լրիվ համապատասխանելու մասին,
- 5) պաշտոնի իջեցում մեկ աստիճանով,
- 6) կոչման իջեցում մեկ աստիճանով,
- 7) ոստիկանությունից ազատում:

Օրենքով կարգապահական պատասխանատվության լրացուցիչ հիմքեր են նախատեսվում ոստիկանության ուսումնական հաստատությունում առկա ուսուցման սովորողների համար: Այսպես, կարգապահական խախտման, այն է՝ ուսումնական պարապմունքներից անհարգելի բացակայության, ինչպես նաև պարբերաբար ուշանալու համար վերջիններիս նկատմամբ բացի «նկատողություն» և «խիստ նկատողություն» տույժերից

www.lawinstitute.am

կարող են կիրառվել «արտահերթ վերակարգի հայտարարում» և «ազատում ոստիկանության ուսումնական հաստատությունից» տույժերը:

Ոստիկանության ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ընթացքում առաջացող հարաբերությունները կարգավորող նորմերի ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը, ելնելով վտանգավորության աստիճանից, դասակարգել է կոպիտ և ոչ կոպիտ կարգապահական խախտումներ: Կարգապահական կոպիտ խախտումներ են համարվում քաղաքացիների սահմանադրական իրավունքները ոտնահարելը, ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկությունները, ծառայողների և այլ անձանց անհատական տվյալներն ապօրինաբար օգտագործելը կամ հրապարակելը՝ փոխանցելը, հաղորդելը, տրամադրելը, առաքելը, ինչպես նաև որևէ ձևով մատչելի դարձնելն այն անձանց, ովքեր այդպիսի տեղեկություններին առնչվելու թույլտվություն չունեն, իր և այլոց համար անօրինական եկամուտներ ստանալու կամ այլ անձնական դրդապատճառներով պաշտոնական դիրքն օգտագործելը, ինչպես նաև կամայականություն դրսևորելը, ոգելից խմիչքներ օգտագործած վիճակում ծառայության մեջ գտնվելը, թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր օգտագործելը, առանց հարգելի պատճառների ամբողջ աշխատանքային օրվա (հերթապահության) ընթացքում ծառայության չներկայանալը, ծառայության վայրում գույք հափշտակելը, գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, ոստիկանության ծառայողի պատիվն ու արժանապատվությունը արատավորելը կամ նրա նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելը, ծառայողական քննության ընթացքում բժշկական ստուգումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը կամ ամենամյա կանխարգելիչ բժշկական քննությունից խուսափելը, ղեկավարի (ուղղակի կամ անմիջական) իրավասության սահմաններում տրված հրամանները, ցուցումները, հանձնարարականները երկու կամ ավելի անգամ դիտավորությամբ չկատարելը: Ոստիկանության ծառայողների նկատմամբ «ոստիկանությունից ազատում» կարգապահական տույժը կարող է նշանակվել միայն կարգապահական կոպիտ խախտումների համար:

ՀՀ ոստիկանության ծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու

ընթացքում դրա հիմնավորվածությունը, արդյունավետությունը, նպատակայնությունը ապահովելու, կարգապահական տույժի անհարկի կիրառումը բացառելու և դրա ընթացքում ծառայողի իրավունքների ոտնահարումը բացառելու նպատակով սահմանված է կարգապահական տույժեր կիրառելու կարգն ու պայմանները:

Նման դեպքում մինչև կարգապահական տույժ նշանակելը կարգապահական տույժ կիրառելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարգապահական խախտման վերաբերյալ պետք է գրավոր բացատրություն պահանջի կարգապահական խախտում թույլ տված ծառայողից: Տույժը նշանակվում է, եթե երեք ամսից ավելի չի անցել կարգապահական խախտման հայտնաբերման, այսինքն՝ ծառայողական քննություն նշանակելու օրվանից՝ չհաշված նախնական քննության կամ դատական քննության ժամանակահատվածը, հիվանդությունը կամ արձակուրդում գտնվելը, ընդ որում, նշանակվող տույժը պետք է համապատասխանի կատարված խախտման բնույթին և վտանգավորության աստիճանին: Այն չի կարող կիրառվել, եթե կարգապահական խախտումը կատարելու օրվանից անցել է մեկ տարի: Կարգապահական յուրաքանչյուր խախտման համար կարող է նշանակվել մեկ տույժ, որի մասին ծառայողը տեղեկացվում է դրա նշանակումից հետո՝ հնգօրյա ժամկետում:

Եթե կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, ծառայողը նոր կարգապահական տույժի չի ենթարկվել, ապա տույժը համարվում է մարված: Այն կարող է հանվել նաև մինչև մեկ տարին լրանալը, եթե ծառայողը թույլ չի տվել կարգապահական նոր խախտում:

Բացառիկ դեպքերում մեկից ավելի կարգապահական տույժերը կարող են հանվել պետական կառավարման մարմնի ղեկավարի կողմից, սույն օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով:

Ոստիկանության ծառայողների նկատմամբ, բացառությամբ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող և ոստիկանության կրտսեր կոչումներ ունեցող ծառայողների, կարգապահական տույժերը կիրառվում են ծառայողական քննության արդյունքների հիման վրա:

*Ծառայողական քննությունը օրենքով սահ-*

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

մանված դեպքերում և կարգով ոստիկանության ծառայողի պարտականությունների կատարմանը, նրա գործունեությանն ու դրսևորած վարքագծին առնչվող հարցերի քննությունն է: Դրա խնդիրներն են՝

ա) ոստիկանությունում սկզբունքների իրականացում,

բ) ծառայողական կարգապահության ամրապնդում,

գ) ոստիկանության ծառայողի կողմից կատարված կարգապահական և էթիկայի կանոնների խախտման յուրաքանչյուր դեպքի ժամանակին բացահայտում,

դ) կարգապահական խախտումների կանխարգելում և կարգապահական խախտում ծնող պատճառների ու դրանց նպաստող պայմանների վերացում,

ե) ոստիկանության ծառայողների իրավունքների մինչդատական պաշտպանություն,

զ) կարգապահական խախտման հանգամանքների ժամանակին, լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ պարզաբանում,

է) անհիմն կերպով կարգապահական պատասխանատվության ենթարկված ոստիկանության ծառայողի հեղինակության վերականգնում:

Ծառայողական քննություն իրենց իրավասության սահմաններում կարող են կատարել ոստիկանության բոլոր ինքնուրույն ստորաբաժանումների ղեկավարները:

Ոստիկանության գլխավոր և բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ ծառայողական քննությունը կատարում են ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայողական քննություններ իրականացնելու հիմնական իրավասություն ունեցող ստորաբաժանումը կամ ոստիկանության պետի հանձնարարությամբ՝ ոստիկանության կենտրոնական ապարատի այլ ծառայություններ կամ ոստիկանության պետի լիազորած ոստիկանության մարզային վարչությունը:

Ոստիկանության ստորաբաժանումներում կրտսեր, միջին և ավագ խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն կատարելիս ոստիկանության գլխավոր և բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների կողմից կարգապահական խախտում թույլ տալու փաստեր հայտնաբերելու դեպքում ծա-

ռայողական քննության նյութերը ոստիկանության պետի հանձնարարությամբ ուղարկվում են ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայողական քննություններ իրականացնելու հիմնական իրավասություն ունեցող ստորաբաժանում կամ ոստիկանության պետի հանձնարարությամբ՝ ոստիկանության կենտրոնական ապարատի այլ ծառայություն:

Ոստիկանության նախաքննական մարմինների և հատուկ ծառայությունների ծառայողների նկատմամբ ծառայողական քննություն համապատասխանաբար կատարում են նախաքննական մարմինները և հատուկ ծառայությունները կամ ոստիկանության պետի լիազորած ծառայությունը:

Ոստիկանության պետի ցուցումով ոստիկանության ստորաբաժանումներում կատարվող ծառայողական քննության նյութերը ցանկացած փուլում կարող են փոխանցվել ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայողական քննություններ իրականացնելու հիմնական իրավասություն ունեցող ստորաբաժանում կամ ոստիկանության կենտրոնական ապարատի այլ ծառայություն և (կամ) ոստիկանության մարզային վարչություններ՝ հետագա ընթացքը սույն օրենքով սահմանված կարգով լուծելու համար:

Ոստիկանության կենտրոնական ապարատի ծառայողական քննություն իրականացնելու հիմնական իրավասություն ունեցող ստորաբաժանումն ծառայողական քննություն կատարելու ցուցում տալու իրավունք ունեն ոստիկանության պետը կամ նրա տեղակալները՝ իրենց սպասարկման ոլորտում կատարված կարգապահական խախտումների դեպքերում (բացառությամբ գլխավոր և բարձրագույն խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների նկատմամբ):

Ծառայողական քննության նյութերը, դրա արդյունքներով կազմված եզրակացությունը ներկայացվում են ծառայողական քննությունը նշանակող անձին՝ համապատասխան որոշում ընդունելու համար:

Օրենսդիրը կարգապահական կոպիտ խախտում կատարելու համար նախատեսում է նաև ոստիկանության ծառայողի նկատմամբ ոստիկանությունից *ազատում* կարգապահական տույժ կիրառելու հնարավորություն: Այդ ընթացքում ոստիկանության ծառայողների իրավունքների երաշխավորման համար սահմանվել է, որ նման

www.lawinstitute.am

խախտումների առիթով իրականացված ծառայողական քննության նյութերը, դրա արդյունքներով կազմված եզրակացությունը մինչև համապատասխան որոշում ընդունելու համար ծառայողական քննություն նշանակող անձին ներկայացնելը քննության են առնվում ոստիկանության կարգապահական հանձնաժողովում: Վերջինս կաշկանդված չէ ծառայողական քննության նյութերով և կարող է ծառայողական քննություն իրականացնող անձից սեփական նախաձեռնությամբ պահանջել լրացուցիչ մեղադրական փաստական տվյալներ, ինչպես նաև կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի միջնորդությամբ կամ սեփական նախաձեռնությամբ կրկին լսել այլ անձանց բացատրությունները, հետազոտել կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող ոստիկանության ծառայողի լրացուցիչ ներկայացրած փաստական տվյալները:

Կարգապահական հանձնաժողովի կազմում բացի ոստիկանության ծառայողներից՝ ընդգրկվում են նաև պետական այլ մարմինների, ինչպես նաև հասարակական միավորումների ներկայացուցիչներ: Նրա կողմից կայացվող որոշումները հրապարակային են: Հանձնաժողովի կազմը և աշխատակարգը սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ օրենսդրությունը ոստիկանության ծառայողներին քրեական պատասխանատվության ենթարկելու համար առանձնահատկություններ չի նախատեսում, և վերջիններս՝ որպես հանցագործության հատուկ սուբյեկտ՝ պաշտոնատար անձ, պաշտոնատար անձ համարվող պետական այլ ծառայողների նման քրեական պատասխանատվության են ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխով նախատեսված պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններից (պաշտոնե-

ական լիազորությունները չարաշահելը՝ հոդված 308, պաշտոնեական լիազորություններն անցնելը՝ հոդված 309, ձեռնարկատիրական գործունեությանը սպորինի մասնակցելը՝ հոդված 310, կաշառք ստանալը՝ հոդված 311, պաշտոնեական կեղծիք՝ հոդված 314, պաշտոնեական անփութություն՝ հոդված 315) որևէ մեկը կատարելու համար: Միաժամանակ պետք է նշել, որ ՀՀ ոստիկանության որոշ ստորաբաժանումների ծառայողները՝ քննիչները և հետաքննություն կատարող անձինք, քրեական պատասխանատվության են ենթակա նաև արդարադատության իրականացման դեմ ուղղված հանցագործություններից ցուցմուք տալուն հարկադրելու՝ հոդված 341-րդ, սպորինի ձեռքակալելու կամ կալանավորելու՝ հոդված 348-րդ, ապացույցներ կեղծելու՝ հոդված 349-րդ, կամ քրեական պատասխանատվությունից սպորինի ազատելու՝ հոդված 351-րդ, համար:

Ոստիկանության ծառայողների կողմից՝ որպես պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կողմից, իրենց պաշտոնական դիրքի կապակցությամբ հանցակցությամբ կամ նրանց կատարած հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերով նախաքննությունը իրականացնում են ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչները<sup>7</sup>:

Հանցագործություն կատարելու համար ազատագրկման դատապարտվելու դեպքում որպես իրավապահ մարմնի աշխատակիցներ՝ ոստիկանության ծառայողներ կամ նախկին ծառայողներ, ինչպես նաև ոստիկանության զինծառայող կամ նախկին զինծառայող, դատապարտյալները ուղղիչ հիմնարկում անջատ են պահվում այլ դատապարտյալներից<sup>8</sup>:

<sup>1</sup> Տե՛ս 2011թ-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց, Երևան 2012թ. 135 էջից, էջ 84-89:  
<sup>2</sup> Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքը, ՀՍՍՀ Պ. Տ 1985/23, 01.06.1986թ., 14-րդ հոդվածը:  
<sup>3</sup> Տե՛ս Супрун С.В. “Возмещение материального ущерба, причиненного гражданам при раскрытии и расследовании преступлений”; Автореф. Дис. ... канд юрид. наук. Омск, 2001. С. 23.  
<sup>4</sup> Տե՛ս Драгомиров М.И. “Дисциплина, субординация, чинопочитание” // Избранные труды. М., 1956, С. 51.  
<sup>5</sup> Տե՛ս Манохин В.М. “Советская государственная служба”. М., Юридическая литература. 1966. С. 155.

<sup>6</sup> Տե՛ս Гришкoveц А.А. “Проблемы правового регулирования и организации государственной гражданской службы в Российской Федерации”. Дис...доктора юрид. наук. М., 2004.

<sup>7</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք հոդված 190-րդ մաս 6-րդ, ՀՀ ՊՏ 22(55) 21.09.1998.

<sup>8</sup> Տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգիրք հոդված 68-րդ 1-ին մաս կետ 4-րդ, ՀՀ ՊՏ 8(380), 31.01.2005.

#### РЕЗЮМЕ

##### *Особенности ответственности сотрудников полиции Республики Армения*

Институт юридической ответственности является неотъемлемой частью института полицейской службы и представляет из себя совокупность таких правовых норм, которые определяют как основы, так и виды ответственности сотрудников полиции и процедуры их применения.

В этой статье представлены виды и особенности юридической ответственности сотрудников полиции за неисполнение или ненадлежащее исполнение ими своих служебных обязанностей.

#### SUMMARY

##### *The peculiarities of accountability of RA police servants*

The legal institute of accountability of the Police servants is a constituent part of the legal institute of the police service. It is, in fact, a set of legal norms which define the bases, types and ways of the application of accountability of this special type of servants.

The current article dwells upon the types and the characteristics of legal accountability that the police servants have to face in case of negligence of responsibilities or their improper realization.